տալ վոխանակ «և այլն» դնելու, պէտք էր վերլուծել նաև աղջկանը, չալմաճուկը, բօջակը, չուա և ուրիշները, որոնց ինքը ասելի ձևաճհաս էր ի-մանալու։

Ի հարկէ, այս ամենը ալեպիսի աննշան պակասութիւններ են, որոնք ոչ մի կերպ չեն ստորացնի պ. Ցէր-Ազատիքեանի փոքրիկ գործի իրօք մեծ արժանաւորութիւնը։

Պ. Պ.

ԳԱԼԷՄԵԱՐԵԱՆ Հ. ԳՐԻԳՈՐԻՍ վ., Մխիթարեան ուխտէ. «ՄՈՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ» արդի յառաջադիմութեանը մէջ 21 տուերագիծ պատկերով։ Ի Վիէննա, Մխիթարեան տպարան, 1889 թ., փոքր քառածալ, 66 երես, տառ № 10. գինն է 25 կոպէկ։

Մաքուր թղթի վերայ գեղեցիկ տպած սոյն գրքոյկը առաջին հատորն է «Արուեստագիտական մատենադարան» վերնագրով տպելիք մի շարք աշխատութիւնների։

Առաջին մասում խօսւում է՝ թէ ինչ է մոմը, ինչպէս է ստացւում, ւեսայ՝ մոմի յատկութիւնների, բաղադրութեան ու տեսակների, նորա նենդումն իմանալու, նրան հալեցնելու, մաքրելու, սպիտակացնելու, թափելու, ճրագ շինելու, ճրագները զարդարելու և դուճաւորելու մասին։ Երկրորդ մասը ասելի կարճ է և պարունակում է տեղեկութիւններ մոմագործութեան ուրիշ գործածութիւնների մասին, օրինակ՝ թէ ինչ է ու ինչ բաղադրութեամբ են բանեցնում արծաթագործների, ատամնների, կօշկի, յատակի մեղրամոմը և այլն։

Գրուածքի լեզուն մաքուր է, հասկանալի և խրթնաբանութիւններից ու վիճակի մխիթարեաններին յատուկ դրաբարեան խառնակութիւնից աղատ։ Նորահնար հասկերէն գիտական տերմիններին կից փակագծում դրած են ֆրանսերէն բառերը։

Գրքոյկը իւր մէջ պարունակող տեղեկութիւններով տալիս է լիակատար գաղափար մոմագործութեան մասին, որ հետաքրքրում է այժմ առաւել էջմիածնի միաբանութեան, եթէ արդէն չի մոռացել նա մոմի սեպհական գործարան ունենալու մտադրութիւնը։

Լ. Ս.